ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 օգոստոսի 2014 թվականի N 38-Ա

Լ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 164-րդ հոդվածների դրույթներով և համաձայն <<Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Լ. Հարությունյանի անձնական դիմումի, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1.<<Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Լյուդմիլա Հարությունյանին 2014թվականի օգոստոսի 13-ից սեպտեմբերի 12-ը ներառյալ տրամադրել իր ամենամյա և լրացուցիչ արձակուրդը:

Հիմք. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 164-րդ հոդվածներ, Լ. Հարությունյանի անձնական դիմումը:

2. Լյուդմիլա Հարությունյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել ընտանեկան բժիշկ Զարուհի Առաքելյանի վրա:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2014թ. օգոստոսի 11
ք. Կապան